ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԳՄ ԱՇՁԲ - 12/05

ք. Դավառ «19» դեկտեմբեր 2011թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս.Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շանթ-Սեյրան » ՍՊԸ- ն ի դեմս Ընկերության տնօրեն Դ.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել Ծովասարի խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի կառուցում, Ծովինարի ոռոգման ջրի ջրագծի կառուցում, Արգիճի գետի հունի մաքրման և ափերի ամրացման աշխատանքներ Ն.Գետաշենի տարածքում, Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոցի ասֆալտապատում աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածով նախատեսված աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետ է սահմանվում՝ 01.07.2012թ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով: Սույն պայմանագրում նշված՝ Աշխատանքների կատարման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կապալառուին.

3.1.5 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն երկու և ավելի անգամ խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի ապահովման համար սահմանված ժամկետները.

3.1.6 Առանց կատարված աշխատանքի դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է աշխատանքի կատարման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.8 Աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ 5 (հինգ) տարվա ընթացքում, Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

3.1.9 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքների իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.10 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքները կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված դեպքերի:

3.3.3 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

3.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքները դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

4.1 Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված գրաֆիկով: Աշխատանքների ընդունումն իրականացվում է Կապալառուի կողմից ներկայացվող, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված այլ փաստաթղթերի հիման վրա:

4.1.1 Աշխատանքի կատարման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Պատվիրատուն Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերն ստանալու պահից 40 օրվա ընթացքում Կապալառուին է ուղարկում հանձնման-ընդունման՝ ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3 Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.5 Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 120887100.0 (մեկ հարյուր քսան միլիոն ութ հարյուր ութանասունյոթ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, որից 20147900.0 (քսան միլիոն մեկ հարյուր քառասունյոթ հազար ինն հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն այդ թվում

Ծովասարի խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի կառուցում՝ 18399000.0 (տասնութ միլիոն երեք հարյուր իննսունինն հազար) ՀՀ դրամ, որից 3066500.0 (երեք միլիոն վացունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն

Արգիճի գետի հունի մաքրման և ափերի ամրացման աշխատանքներ Ն.Գետաշենի տարածքում '18399800.0 (տասնութ միլիոն երեք հարյուր իննսունինն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, որից 3066600.0 (երեք միլիոն վացունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն

Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոցի ասֆալտապատում՝ 47190400.0 (քառասունյոթ միլիոն մեկ հարյուր իննսուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որից 7865100.0 (յոթ միլիոն ութ հարյուր վացունհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն

Ծովինարի ոռոգման ջրի ջրագծի կառուցում `36897900.0 (երեսունվեց միլիոն ութ հարյուր իննսունյոթ հազար ինն հարյուր) ՀՀ դրամ, որից 6149700.0 (վեց միլիոն մեկ հարյուր քառասունինն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն

5.1.1. Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով ընդունելու դեպքում, սակայն ոչ ուշ քան մինչև 01-ը սեպտեմբերի 2012թ., պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.2 Սույն պայմանագրով նախատեսնված՝ Աշխատանքի առանձին փուլերի և ծավալների գները ներկայացված են սույն պայամանագրի N 1 հավելվածում: Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի կատարման արդյունքում Կապալառուի ստացած խնայողությունը բաշխվում է Կողմերի միջև՝ հավասարաչափ:

5.4 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված

Աշխատանքի դիմաց վճարելու համար N3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարներից:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը (կապալառուն, մատակարարը) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին (կապալառուին, մատակարարին) հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի (կապալառուի, մատակարարի) համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը (կապալառուն, մատակարարը) պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.6 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կապալառու**
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	«Շանթ-Սեյրան» ՍՊԸ,
Հասցե՝ ք. Գավառ Գր. Լուսավորչի 36	գ.Վ.Գետաշեն
Հ/Հ 900171078661	«ԱՇԻԲ» ՓԲԸ Մարտունի մ/ճ
Գավառի [illegible]	h/h 247660051811
ՀՎՀՀ 0[illegible]	ՀՎՀՀ 08205134
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 19 » 12 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀ ԳՄ ԱԾՔԲ-12/05 » գնման պայմանագրի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինարի Ոռոգման ջրի ջրագծի կառուցման
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հազար դրամ

Հ/Հ	Աշխատանքի նկարագիրը	Չ/Մ	Քանակը	Միավոր	Ընդամենը
1	2	3	4	5	6
1	3-րդ կարգի հողի փորում էքսկավատորով և բարձում շերեփի շերեփի տարողությունը 0.4 խմ խրամուղիներում	1000խմ	0.15	1000	150
2	3-րդ կարգի հողի փորում էքսկավատորով կողլիցք շերեփի շերեփի տարողությունը 0.4 խմ խրամուղիներում	1000խմ	1.07	1000	1070
3	Ավելացած գրունտի տեղափոխում 3կմ-ի վրա 150x1.9	տն	285	2	570
4	3-րդ կարգի հողի հարթեցում թափոնատեղում մեխանիզմով	1000խմ	0.15	1000	150
5	3-րդ կարգի հողի փորում ձեռքով խրամուղում մեխանիզմի աշխատանքի հետ	խմ	25	10	250
6	Հին ջրատար խողովակների ապամոնտաժում d=219մմ	մ	740	1.5	1110
7	Ավազե նախապատրաստական շերտ նոր խողովակաշարի տակ	խմ	70.0	4	280
8	Տեղափոխել պողպատյա խողովակներ Φ=325x5մմ փորձարկումով	մ	740	30.4	22496
9	Տեղափոխել պողպատյա խողովակներ Φ=377x5մմ փորձարկումով	մ	12.0	25	300
10	Մետաղական ձևավոր մասերի տեղադրում	կգ	150.0	2	300
11	Մետաղական խողովակների հակակոռոզիոն ներկում 2 անգամ	100քմ	7.71	100	771
12	Քանդած տեղի հողի ետլիցք բուլդոզերով	1000խմ	1.07	500	535
13	Հողի ետլիցքի տոփանում պնևմոտոփանիչներով	100խմ	1.07	500	535
14	2-րդ կարգի գրունտի ետլիցք ձեռքով և տոփանում	խմ	25	5	125
15	Ապամոնտաժված խողովակների բարձում տեղափոխում 3 կմ վրա	տն	21.12	30.4	642.048
	Ընդամենը				29284.0
	Շահույթ 5%				1464.2
	Ընդամենը				30748.3
	ԱԱՀ20%				6149.7
	Ընդամենը				36897.9

Պատվիրատու
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Հասցե՝ ք. Գավառ Գր. Լուսավորչի 36
Հ/Հ 900171078661
Գավառի ՊՄՀ
ՀՎՀՀ 08404767
ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Շանթ-Սեյրան» ՍՊԸ,
գ.Վ.Գետաշեն
«ԱՇԻԲ» ՓԲԸ Մարտունի մ/ճ
h/h 247660051811
ՀՎՀՀ 08205134
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 1
«19» 12 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀ ԳՄ ԱՇՁԲ-12/05» գնմ ան պայմանագրի

ՀՀ Գեղարքունիքի մարզ Ն. Գետաշենի տարածքում
Արգիճի գետի հունի մաքրման և ափերի ամրացման աշխատանքների

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հազար դրամ

Հ/Հ	Աշխատանքի նկարագիրը	Չ/Մ	Քանակը	Միավոր	Ընդամենը
1	2	3	4	5	6
1	3-րդ կարգի թաց գրունտի մշակում բուլդոզերով տեղափոխում 20մ և կուտակում բարձելու համար	1000խմ	2.72	1000	2720
2	Թաց կուտակված գրունտի բարձում էքսկավատորով շերեփի տարողությունը 0.4խմ	1000խմ	2.72	800	2176
3	Ավելացած թաց գրունտի տեղափոխում 3 կմ վրա2720x1.95	տն	5304	0.5	2652
4	2-րդ կարգի հողի հարթեցում թափոնատեղերում մեխանիզմով	1000խմ	2.72	500	1360
5	Քանդած տեղի հողի եղլիցք բուլդոզերով	1000խմ	0.5	500	250
6	Հողի եղլիցքի տոփանում պնևմոտոտփանիչներով	100խմ	5	39	195
7	Ափեպաշտպան թերությունների քարե կառուցվածքներ (գաբիոնե շարվածք)	խմ	300	10	3000
8	Գաբիոն շարվածքի փաթաթում մետաղական ցանցով 50x50մմ բջիջով	քմ	1500	1.5	2250
	Ընդամենը				14603.0
	Շահույթ 5%				730.2
	Ընդամենը				15333.2
	ԱԱՀ20%				3066.6
	Ընդամենը				18399.8

Պատվիրատու
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Հասցե՝ ք. Գավառ Գր. Լուսավորչի 36
Հ/Հ 900171078661
Գավառի գանձարան
ՀՎՀՀ 08404[illegible]
Տնտեսագրություն
Կ.Տ

Կապալառու
«Շանթ-Սեյրան» ՍՊԸ,
գ.Վ.Գետաշեն
«ԱՇԻԲ» ՓԲԸ Մարտունի մ/ճ
h/h 247660051811
ՀՎՀՀ 08205124
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 19 » 12 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀ ԳՄ ԱՇՁԲ-12/05» գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասարի խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի կառուցման

Հազար դրամ

Հ/Հ	Աշխատանքի նկարագիրը	Չ/Մ	Քանակը	Միավոր	Ընդամենը
1	2	3	4	5	6
1	3-րդ կարգի հողի փորում էքսկավատորով և բարձում շերեփի շերեփի տարողությունը 0.4 խմ խրամուղիներում	1000խմ	0.6	1000	600
2	3-րդ կարգի հողի փորում էքսկավատորով կողլիցք շերեփի շերեփի տարողությունը 0.4 խմ խրամուղիներում	1000խմ	2.11	1000	2110
3	Ավելացած գրունտի տեղափոխում 3կմ-ի վրա 600x1.9	տն	1140	0.5	570
4	3-րդ կարգի հողի հարթեցում թափոնատեղում մեխանիզմով	1000խմ	0.6	500	300
5	4-րդ կարգի հողի փորում ձեռքով խրամուղում մեխանիզմի աշխատանքից հետո	խմ	90	1.5	135
6	Հին ջրատար խողովակների ապամոնտաժում d=100մմ	մ	1400	0.5	700
7	Հին ջրատար խողովակների ապամոնտաժում d=80մմ	մ	710	0.8	568
8	Ավազե նախապատրաստական շերտ նոր խողովակաշարի տակ	խմ	150.0	3	450
9	Տեղադրել պոլիէթիլենային խողովակ Φ=110x8.2մմ փորձարկումով	մ	1400	3	4200
10	Տեղադրել պոլիէթիլենային խողովակ Φ=75x6.8մմ փորձարկումով	մ	710.0	2.5	1775
11	Տեղադրել պոլիէթիլենային ձևավոր մասեր	հատ	15.0	5	75
12	Ավազի պաշտպանիչ շերտի ետլիցք ձեռքով և տոփանում	խմ	150	2	300
13	Ավազի պաշտպանիչ շերտի ետլիցք բուլդոզերով	1000խմ	0.3	800	240
14	Քանդած տեղի հողի ետլիցք բուլդոզերով	1000խմ	2.11	500	1055
15	Հողի և ավազի ետլիցքի տոփանում պնևմոտոփանմիչներով	100խմ	8.4	20	168
16	2-րդ կարգի գրունտի ետլիցք ձեռքով և տոփանում	խմ	90	1	90
17	Տեղադրել ճկուն կցորդիչ Φ=100մմ	հատ	1	15	15
18	Տեղադրել պոլիէթիլենային մետաղական անցում Φ=110x75մմ	հատ	1	10	10
19	Մետաղական կցաշուրթերի եռակցում Φ=90մմ Pn=1.0Մպա	հատ	1	20	20
20	Փական թաղված տեղադրման Φ=90մմ Pn=1.0Մպա	հատ	1	30	30
21	Տեղադրել պոլիէթիլենային պաշտպանիչ խողովակ Φ=100մմ	մ	1.5	4	6
22	Տեղադրել բետոնե սալիկ փոքր կափարիչով 1.0x1.0մ	հատ	1	40	40
23	ԴՀ և ՕՀ դիտահորի տեղադրում հավաքովի ե/բ կոնստրուքցիաներով և թուջե մտոցով	խմ	1.48	65	96.2
24	Դիտահորի ե. բետոնյա մասեր	խմ	1.48	60	88.8
25	Ամրան	տն	0.091	400	36.4
26	Թուջե մտոց	հատ	2	10	20
27	Տեղադրել պոլիէթիլենային անցումային եռաբախշիչ Φ=110x50մմ	հատ	2	50	100
28	Տեղադրել պոլիէթիլենային խողովակΦ=50մմ	մ	5.3	3	15.9
29	Մետաղական կցաշուրթերի եռակցում Φ=40մմ	հատ	2	5	10
30	Սեպավոր փականի տեղադրում Φ=40մմ Pn=1.6Մպա	հատ	1	15	15
31	Կափույր օդհան կենտրոնականΦ=40մմ Pn=1.6Մպա	հատ	1	10	10
32	Ջրագծի լվացում և քլորացում	կմ	2.11	270	569.7

33	Ապամոնտաժված խողովակների բարձում տեղափոխում 3կմ վրա	տն	21.2	8.65	183.38

Ընդամենը	14602.4
Շահույթ 5%	730.1
Ընդամենը	15332.5
ԱԱՀ20%	3066.5
Ընդամենը	18399.0

Պատվիրատու
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Հասցե՝ ք. Գավառ Գր. Լուսավորչի 36
Հ/Հ 900171078661
Գավառ
ՀՎՀՀ 08204
Կ.Տ

Կապալառու
«Շանթ-Սեյրան» ՍՊԸ,
գ.Վ.Գետաշեն
«ԱՇԻԲ» ՓԲԸ Մարտունի մ/ճ
h/h 247660051811
ՀՎՀՀ 08205134
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 19 » 12 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀ ԳՄ ԱՇՁԲ-12/05 » գնմ ան պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ք. Մարտունի Մյասնիկյան փողոցի ասֆալտապատում

Հազար դրամ

Հ/Հ	Աշխատանքի նկարագիրը	Չ/Մ	Քանակը	Միավոր	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Ճանապարհային հագուստի նորոգում				
1	Ճանապարհային ա/բ ծածկի քանդում	100խմ	1.491	150	223.65
2	Խճային հիմքի քանդում	100խմ	2.982	150	447.3
3	Շինարարական աղբի բարձում տեղափոխում 1կմ հեռավորության վրա	տն	835	1	835
4	Խճային հիմքի իրականացում h=12սմ	100քմ	29.82	50	1491
5	Բիտումի լցաբաշխում (4.12տ 1000քմ)	տն	12.29	300	3687
6	Ծածկի վերին շերտի իրականացում մանրահատիկ ա/բ h=5սմ	100քմ	30.72	677	20797.44
	Իջատեղերի և մուտքերի իրականացում				0
1	Խճային հիմքի իրականացում h=12սմ	100քմ	4.37	150	655.5
2	Բիտումի լցաբաշխում (4.12տ 1000քմ)	տն	1.8	300	540
3	Ծածկի վերին շերտի իրականացում մանրահատիկ ա/բ h=4սմ	100քմ	4.25	677	2877.25
	Մայթերի նորոգում				0
1	Եզրաքարերի քանդում	գմ	50.0	2	100
2	Մայթերի ա/բ ծածկի քանդում h(միջ)=3սմ	100քմ	2.94	150	441
3	Մայթերի ավազակոպճային հիմքի քանդում	100քմ	0.21	200	42
4	Շինարարական աղբի բարձում տեղափոխում 1կմ հեռավորության վրա	տն	60.1	1	60.1
5	Ավազակոպճային հիմքի իրականացում h=12սմ	խմ	35.31	10	353.1
6	Ծածկի իրականացում մանրահատիկ ա/բ h=3սմ	100քմ	2.94	677	1990.38
7	Հավաքովի բետոնյա եզրաքարեր (15x30)սմ	100գմ	2.89	300	867
8	Բազալտե եզրաքարերի տեղադրում(15x30)	100գմ	0.66	500	330
	Դիտահորերի բարձրացում				0
1	Դիտահորի բարձրացում	խմ	0.6	150	90
2	Հավաքովի ե/բ սալերի ապամոնտաժում և տեղադրում	խմ	1.95	100	195
3	Հավաքովի ե/բ սալերի թուջե կափարիչով , վերադրձ	հատ	5	50	250
	D=325մմ մետաղական խողովակի տեղադրում				0
1	Ա/ց խողովակի ապամոնտաժում d=0.35մմ	գմ	8	1	8
2	Շինարարական աղբի բարձում տեղափոխում 1կմ հեռավորության վրա	տն	0.411	1	0.411
3	4-րդ կարգի գրունտի մշակում ձեռքով և բարձում ա/ի	100խմ	0.01	500	5
4	Բնահողի տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա	տն	2.7	20	54
5	Աշխատանք լցակույտում 4-րդ կարգի	1000խմ	0.001	5000	5
6	3-րդ կարգի գրունտի մշակում ձեռքով և բարձում ա/ի (մուտքի և ելքի մաքրում)	100խմ	0.08	100	8
7	Բնահողի տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա	տն	15.2	10	152
8	Աշխատանք լցակույտում 4-րդ կարգի	1000խմ	0.008	5000	40
9	Ավազակոպճային նախապատրաստում h=10սմ	խմ	0.495	10	4.95

10	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20	100խմ	0.04	4000	160
11	Մետաղական խողովակի տեղադրում D=0.325(7)մ	գմ	11	30	330
12	D=0.325(7)մ խողովակի հիդրոմեկուսացում	100քմ	0.106	100	10.6
13	Նույնը՝ գլխամասերի	100քմ	0.15	100	15
	Անվտանգության էլեմենտների տեղադրում				0
1	Մետաղական նշանների տեղադրում	1նշան	12	20	240
2	Երթևեկելի մասի գծանշում հոծ գծով 0.1մ լայնությամբ	կմ	0.294	500	147

Ընդամենը	37452.7
Շահույթ 5%	1872.6
Ընդամենը	39325.3
ԱԱՀ20%	7865.1
Ընդամենը	47190.4

Պատվիրատու
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Հասցե՝ ք. Գավառ Գր. Լուսավորչի 36
Հ/Հ 900171078661
Գավառի [illegible]
ՀՎՀՀ 08404787
Ղեկավար
Կ.Տ

Կապալառու
«Շանթ-Մեյրան» ՍՊԸ,
գ.Վ.Գետաշեն
«ԱՇԻԲ» ՓԲԸ Մարտունի մ/ճ
հ/հ 247660051811
ՀՎՀՀ 08205134
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«_19_» դեկտեմբեր 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀ ԳՄ ԱԾՁԲ-12/05 գնման պայմանագրի

Կապալառու	Պատվիրատու
_____	_____
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____
հհ_____	հհ_____
_____	_____
հվհհ_____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2011թ.

Պայմանագրի անվանումը՝ ----------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 2011թ.

Պայմանագրի համարը՝_____.

Պատվիրատուն՝ ի դեմս_____և կապալառուն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2011թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված նախագծանախահաշվային փաստաթղթերին և օրացուցային գրաֆիկին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն «_____» «_____» 2011թ–ից «_____» « » 2011թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
ազգանուն _____	ազգանուն _____
Կ Տ	Կ Տ

Հավելված թիվ 3
«19»դեկտեմբեր 2011թ.
կնքված աշխատանքների կատարման

թիվ «ՀՀ ԳՄ ԱԾՁԲ-12/05» գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազ դրամ

N ը/կ	Աշխատանքների անվանումը	Ֆինանսավորման գումարը ՀՀ 2012թ պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվարի	փետրվարի	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոցի ասֆալտապատում	47190.4	47190.4	47190.4	47190.4	47190.4	47190.4	47190.4	47190.4	47190.4	47190.4	47190.4	47190.4	47190.4
2	Ծովասարի խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի կառուցում	18399.0	18399.0	18399.0	18399.0	18399.0	18399.0	18399.0	18399.0	18399.0	18399.0	18399.0	18399.0	18399.0
3	Ծովինարի ոռոգման ջրի ջրագծի կառուցում	36897.9	36897.9	36897.9	36897.9	36897.9	36897.9	36897.9	36897.9	36897.9	36897.9	36897.9	36897.9	36897.9
4	Արգիճի գետի հունի մաքրման և ափերի ամրացման աշխատանքներ Ն.Գետաշենի տարածքում	18399.8	18399.8	18399.8	18399.8	18399.8	18399.8	18399.8	18399.8	18399.8	18399.8	18399.8	18399.8	18399.8

Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

Պատվիրատու
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Հասցե՝ ք. Գավառ Գր. Լուսավորչի 36
Հ/Հ 900171078661
Գավառի ՏԳՊ
ՀՎՀՀ 0840

ստորագրություն

Կ.Տ

Կապալառու
«Շանթ-Սեյրան» ՍՊԸ,
գ.Վ.Գետաշեն
«ԱՇԻԲ» ՓԲԸ Մարտունի մ/ճ
h/h 247660051811
ՀՎՀՀ 08285134

(ստորագրություն)

Կ.Տ

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Ծովասարի խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի կառուցման, Ծովինարի ոռոգման ջրի ջրագծի կառուցման, Արգիճի գետի հունի մաքրման և ափերի ամրացման աշխատանքներ Ն.Գետաշենի տարածքում, Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոցի ասֆալտապատման աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը (հազ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	Ծովասարի խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի կառուցում	18399.0	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.07.2012թ
2	Արգիճի գետի հունի մաքրման և ափերի ամրացման աշխատանքներ Ն.Գետաշենի տարածքում	18399.8	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.07.2012թ
3	Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոցի ասֆալտապատում	47190.4	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.07.2012թ
4	Ծովինարի ոռոգման ջրի ջրագծի կառուցում	36897.9	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.07.2012թ
	ԸՆԴԱՄԵՆԸ	120887.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.07.2012թ

Պատվիրատու
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Հասցե՝ ք. Գավառ Գր. Լուսավորչի 36
Հ/Հ 900171078661
Գավառի ՏԳԲ
ՀՎՀՀ 08404767

Կ.Տ.

(ստորագրություն)

Կապալառու
«Շանթ-Սեյրան» ՍՊԸ,
գ.Վ.Գետաշեն
«ԱՇԻԲ» ՓԲԸ Մարտունի մ/ճ
հ/հ 247660051811
ՀՎՀՀ 08205134

(ստորագրություն)

Կ.Տ.